## 10. ՇԱՀՄԱՍՈՒՐ ԳՑՈՒԴ

**267.** *Գյուղից մոտ երեք կիլոմետր հյուսիս, անտառի մեջ, «Կտողնաւթալա» կոչված վայրում ընկած մեծ ու անտաշ ժայռաբեկորի վրա փորված է խաչ, տակին 6 տող.*



ԹԻՎ. :ՋԼ: (1481).| ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԵՍ ԽՈ-
ՐԵՇԱՀ| ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱԻՍ
ՀՈԳՈՅ ԻՄՈՒ ԵՒ ԶԱԻԱԿԱՑ| ԻՄՈՑ ԲԱՐԵ-
ԽԱԻՍ ԱՌ| ՔՍ. ԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

## 11. ԱՌԱՋԱՁՈՐ

*Գյուղի անվան Առաջաձոր ձևը ավելի հին է։*

*Գյուղամիջում կան երկու խումբ հուշարձաններ, որոնք արձանագրություններ ունեն.*

*Ա.* Անապատ. *գտնվում է գյուղի հարավային եզրին, պատանման քերծի տակ, բաղկացած է իրար մոտ գտնվող երկու այրերից, որոնց առաջ պատ շարելով ստացվել են կիսաժայռափոր երկու մատուռներ։ Այժմ այրերի առջևի պատերը քանդված են և մատուռները բնական, ոչ խոր այրերի տեսք ունեն, իսկ դրանց պատերին եղած արձանագրություններից բեկորներ են մնացել տեղում։*

*Անապատ կոչված այս մատուռների մոտ կա մի հսկայական ժայռաբեկոր, բնականից բավական ողորկ մակերեսներով, որի վրա գրված է այս միջավայրի հնագույն արձանագրությունը՝ 1249թ.։*

*Բ.* Աստվածածին, *եկեղեցի, գտնվում է գյուղամիջում, շինված է 1668թ., երկու կամարների վրա թաղակապ սովորական շենք է։ Հնում այստեղ պահվում էին երկու ձեռագիր մատյաններ՝ ավետարան և աստվածաշունչ, որոնք ունեին կարևոր հիշատակարաններ։ Հատկապես աստվածաշնչի հիշատակարանը մատնացույց էր անում գյուղի հանդ ու դաշտի մի շարք անուններ և սահմաններ*[1]*։*

**268.** ***ԺԱՅՌԱԲԵԿՈՐ,*** *մեծ, բնական, ընկած է գյուղի արևելքում՝ Անապատ կոչվող կիսաժայռափոր մատուռների առաջ, հարավ-արևելյան և արևելյան երեսներին, 22 տող.*

ՑՈՐԺԱՄ ՆԿԱՐԵՑԱՆ|
ՀԱՆՔԷ(?) ԹԻՎՆ՝ :ՈՂԲ: ԷՐ (1249). ՏԷՐ ԽՍՁԻՆՈՑ ՋԱԼԱԼ:|
ԳՐԵՑԱՆ, ՆԿԱՐԵՑԱՆ ԿԱՏԱՐԵՑԱՔ ԱՌԱՔ[ԵԱՔ]Ս(?)ՅԱՆՈՒՆ ՍԲ ԵՐՈՐԴ[ՈՒԹԵԱՆ]
[Կ]ՏՆԱԻՐԷՆՈՒԹԵԱՄԲՆ ՔԻ. Ի ԲԱՐԵԽԱԻՍ ՀՈԳՈՑ ԵՒ ՄԱՐՄՆՈ ԵՒ Ի ՊԱՐԾԱ
[ՆՍ . . . |. . . . |. . . . |
ՏՐ. ԵՂԻԱ ՇԻՆԵՑ ԶՍԲ. ԱՆԱՊԱՏՍ ԵՒ Ի ՍՄԱ ԱՅԼ ՕԾԷ. Ի ՍՄԱՑ ԹՇՆ|
ԱՄԻՆ ԿՈՐԾԱՆԱԾ Է, ՈՐ Ա[ՅԼ]Ք ԲԱՐԵԿԱՄ ԵՆ ՍՄԱՑ, ՍԱ ԲԱՐԵԽԱԻՍ Է ՆՈՑԱ.|

[1] Ս. Ջալալեանց, *Ճանապարհորդութիւն, մասն Բ, էջ 241։* Մ. Բարխուդարեանց, *Արցախ, էջ 186։*